## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Ներկանյութը Հայաստանից Եվրոպա է տարել Հարություն Ալթունյանը՝ Ժան Ալթենը, որը փախել էր Անատոլիայից՝ ստրուկի իր դժնդակ կյանքն այլևս չհանդուրժելով: Որդան ներկ չունեցող Ֆրանսիայի համար տասնութերորդ դարում տորոնի ներդրումը հայտնություն էր: Ի պատիվ Ժան Ալթենի՝ ֆրանսիացիները հետագայում մի հուշատախտակ դրեցին Ավինիոնի Կելվե թանգարանում՝ հավերժացնելով տորոնի մշակումը սովորեցնողի անունը:*

***

*...Հին Հռոմում ծիրանի ներկի ստացման նկարագրությունը համարվում էր առավել գաղտնի պահվող պետական գաղտնիքներից մեկը: Ներոնի հրահանգով ծիրանագույն հագուստ՝ թագավորական ծիրանի հագնելու իրավունքը պատկանում էր միայն տիտղոսավոր անձանց:*

***

*...Գաղտնի նամակագրության կամ, այսպես կոչված գաղտնագրության համար կան շատ եղանակներ և բոլորն օգտագործում են գաղտնի թանաքներ՝ անգույն  կամ թեթև գունավորված լուծույթներ:*

*Հայտնի լրտես Մատա Հարին նույնպես գաղտնի թանաքներ էր օգտագործում: Երբ նա Փարիզում ձերբակալվեց, նրա հյուրանոցային համարում գտան կոբալտի քլորիդի լուծույթով սրվակ, որը դարձավ նրա լրտեսական գործունեության բացահայտման հիմնական հանցանշաններից մեկը, քանի որ կոբալտի քլորիդը կարելի է հաջողությամբ օգտագործել գաղտնագրության համար: 25 մլ ջրում 1 գ կոբալտի քլորիդ պարունակող լուծույթով գրված տառերը բացարձակապես աննկատ են և տեսանելի են դառնում թղթի տաքացումից, որի արդյունքում ձեռք են բերում կապույտ գույն:*